ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2022թվականի N 119

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի ավագանու 28.02.2022 թվականի թիվ 11-Ա որոշումը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, որոշում եմ.

«ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը ժամանակավորապես իրականացնելու նպատակով վարձակալել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրի բնակիչ Ռուսլան Օհանյանի սեփականություն հանդիսացող բնակելի տունը ամսական 90000 /իննսուն հազար/ ՀՀ դրամով, 1 տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 22 թ. 03 04
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2022թվականի N 120

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 11.05.2002թ. թիվ 498 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետը, ինչպես նաև Հովհաննես Քեշիշյանի կողմից ներկայացված հայտը, որոշում եմ.

Հովհաննես Քեշիշյանին տրամադրել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի գյուղ Վարդաբլուր Կենտրոնական փողոց թիվ 116/1 հասցեի հողամասում պատշգամբի և ծածկի կառուցման աշխատանքների նախագծման թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 22 թ. 03 04
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 121

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԲԱՐԶԻ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 06-062-0116-0037 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 02.03.1991Թ. ԹԻՎ 07 ՈՐՈՇՈՒՄԻՑ 12.07.2002թ.ԻՆ ՏՐՎԱԾ ՔԱՂՎԱԾՔԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով 09.03.2022թ. համայնքի ղեկավարի կողմից տրամադրված՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղեկական հանձնաժողովի 02.03.1991թ. թիվ 07 որոշումից քաղվածքը

1. Անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի կողմից 06-062-0116-0037 կադաստրային ծածկագրի անշարժ գույքի համար կադաստրային գործում առկա նախկինում տրամադրված քաղվածքը, քանի որ այն տրամադրված է եղել սխալ: Անուշավան Գարիկի Ասրյանը ծնվել է 1993թ.-ին և չէր կարող օգտվել 1991թ.-ին անհատույց տրամադրվող հողերից:
2. Հոբարձի գյուղի 06-062-0116-0037 կադաստրային ծածկագրի անշարժ գույքի համար հիմք ընդունել Գյուլագարակ համայնքի ղեկավարի կողմից 09.03.2022 թ-ին տրված N 42 քաղվածքը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 22 թ. 03 09
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 122

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍԵՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շահեն Մարիկյանի դիմումը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծերը, N 27062017-06-0020 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարությանն կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին 29.04.2021 թ.-ի թիվ 698-ն որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ ՝

1.Հաստատել, թիվ 27062017-06-0020 վկայականի գծային չափերը և հողամասի ընդհանուր մակերեսը ըստ «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ -ի կողմից տրված տեղագրական հատակագծի:
2.Հաստատել հողամասի մակերեսը ըստ «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ -ի և 0,136198 հա հողամասի նկատմամբ ճանաչել Շահեն Ռոստոմի Մարիկյանի սեփականության իրավունքը, քանի որ 06-029-0027-0008 ծածկագրի հողամասի սահմանների գծային չափերը համաձայն կադաստրային քարտեզում և վկայականում արտացոլված հողամասի հատակագիծը բաժնում նշված չափերը համապատասխանում են միմիանց:
3. 06-029-0027-0008 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,1281 հա հողամասի հասցեն թողնել անփոփոխ՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գ. Գյուլագարակ1-ի փողոց թիվ 7 բնակելի տուն:
4.06-029-0027-0008 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,00811 հա հողամասին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գ. Գյուլագարակ 1-ին փողոց թիվ 7/1 հողամաս:
5.Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 123

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Հոբարձի բնակավայրի 06-062-0020-0009 ծածկագրի տնամերձ հողամասին և տանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Հոբարձի բնակավայր, 14 փողոց թիվ 3 բնակելի տուն :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 22թ. 03 09
գ.Գյուլագարակ